

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/4

20 հունիսի 2017թ.

Քննարկվեց «ՍՈՒՐԵՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 25.04.2017թ. թիվ 2139088 ակտի դեմ:

«ՍՈՒՐԵՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ 05.04.2017թ. թիվ 2139088 հանձնարարագրի համաձայն «ՍՈՒՐԵՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) «ԳԵՏՈՓ» ռեստորանում Իջևանի ՏՀՏ կողմից կատարվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով 25.04.2017թ. կազմվել է թիվ 2139088 ակտը: Ստուգման պահին օճառների մի մասն ընդհանուր տուփից, որի վրա կար դրոշմանիշը, հանվել էին և տեղադրվել հյուրանոցային համարներում: Արդյունքում նշված օճառների վրա դրոշմանիշեր առկա չեն եղել: Օճառների տուփը և օճառների մի մասը ի պահ են հանձնվել գանգատաբերին:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 25.04.2017թ. թիվ 2139088 ակտը և մինչև սույն գործով որոշում կայացնելը կասեցնել իրավաբանական վարչությունում հարուցված վարչական վարույթը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի 05.04.2017թ. թիվ 2139088 հանձնարարագրի համաձայն «ՍՈՒՐԵՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 25.04.2017թ. թիվ 2139088 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ ընկերությանը պատկանող հյուրանոցային համարներում առկա էր «Hotel Soap» (15գ.) տեսակի փաթեթավորված օճառներ, որոնց վրա բացակայում էին հսկիչ նշանները (դրոշմապիտակները): Օճառները հայտնաբերվել են ընկերությանը պատկանող հյուրանոցային համալիրում՝ իրենց օտարման վերջնական փուլում: Ընկերության կողմից խախտվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ և 9.4-րդ հոդվածների պահանջները:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ սույն հոդվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով

սահմանված՝ համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափաճարված), շշալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար:

Տվյալ դեպքում օճառը ներառված է վերը նշված հոդվածով ներկայացված աղյուսակում (ծածկագիր ըստ ԱՏԳ ԱԱ թիվ 3401):

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ակտում հիշատակված օճառներն ընկերության կողմից ձեռք են բերվել տոնավաճառից: Մասնավորապես, այդ օճառները (որոնց քաշը կազմում է 15 գրամ) փաթեթավորված են եղել համապատասխան տուփերի մեջ, որոնց վրա սահմանված կարգով փակցված են եղել դրոշմապիտակներ: Ընկերության կողմից նշված տուփերում առկա օճառները տեղադրվել են հյուրանոցային համարներում՝ հաճախորդների կողմից դրանք օգտագործելու համար:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի պահանջների խախտում ընկերության կողմից թույլ չեն տրվել, քանի որ տոնավաճառից ձեռք բերված տուփերը, որում փաթեթավորված են եղել Ակտում հիշատակված օճառները, եղել են սահմանված կարգով դրոշմապիտակավորված:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 25.04.2017թ. թիվ 2139088 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ